ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԿԵՐՊԱՐԸ

Վլադիմիր Խոջաբեկյան՝ XX դարի հայկական տնտեսագիտությունը ներկայացնող ականավոր գիտնական, մտավորական, մարդկային բացառիկ և յուրօրինակ հատկանիշներով օժտված վառ անհատականություն, որն իր ստեղծագործական կյանքն անհուն սիրով և անմնացորդ նվիրեց գիտությանը: Նրա հայրենանվեր ողջ գործունեությունը ծառայեց ի նպաստ հայրենի գիտության զարգացմանը, հայ ժողովրդի բարօրությանը:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, բնորոշելով Վ. Ե. Խոջաբեկյանի վաստակը, գրում է. «Դժվար է գերագնահատել հայ տնտեսագիտական մտքի զարգացմանը բերած նրա վաստակը, գիտնական քաղաքացու նրա անհանգիստ, համառ ձգտումը՝ գիտական իր ծանրակշիռ ուսումնասիրությունները ծառայեցնել իր ժողովրդին և իր հայրենիքին»:

Ականավոր գիտնական, Հայաստանում ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների գիտական ուղղության դպրոցի հիմնադիր, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյանը ծնվել է 1929 թ. մարտի 2-ին Հայաստանի Վարդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: Դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, մինչ բարձրագույն կրթություն ստանալը, Վ. Խոջաբեկյանը ուսուցանել է իր հայրենի դպրոցում: 1949 թ. ընդունվում և 1954 թ. գերազանցության դիպլոմով ավարտում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Մեկ տարի անց ընդունվում և 1959 թ. ավարտում է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ իր մասնագիտությամբ: Թեկնածուական թեզը Վ. Խոջաբեկյանը պաշտպանում է 1963 թ. և նույն թվականին ստանում է նաև ավագ գիտաշխատողի գիտական կոչում:

Տակավին երիտասարդ տարիներից, Վ. Խոջաբեկյանը, իր առաջին աշխատությունները (1950-ական թվականների վերջերից) նվիրում է աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, ներարտադրական ռեզերվների բացահայտմանը և գնահատմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվների հայտնաբերմանն ու օգտագործմանը: Հայ տնտեսագիտության մեջ վերոնշյալ հիմնախնդիրներին նվիրված՝ Վ. Խոջաբեկյանի անդրանիկ հրապարակումներն այդ տարիներին արժանացան գիտական մամուլի բարձր գնահատականին, իսկ գիտականորեն հիմնավորված առաջարկությունները ներդրվեցին արտադրության մեջ: 1975 թ. Վ. Խոջաբեկյանը

պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Երկու տարի անց՝ 1977 թ., նա արժանանում է պրոֆեսորի գիտական կոչմանը: 1982 թ. ընտրվում է արդեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1994 թ.՝ ակադեմիկոս: 1999-ից Վ. Խոջաբեկյանը Ազգային անվտանգության հիմնահարցերի գծով գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս էր:

Ականավոր գիտնականն իր հիմնական աշխատանքային գործունեու- թյունն սկսել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտից: 1960 թ. ցկյանս նա աշխատում էր ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում: Մեկնարկած երիտասարդ գիտնականը, արդեն 1963 թ. զբաղեցնում էր ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական քարտուղարի պաշ- տոնը: 1967 թ. սկսած՝ նա պարբերաբար ընտրվում էր Գիտությունների ազգային ակադեմիայի ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների բաժնի վարիչի պաշտոնում: 1983-1999 թթ. Վ. Խոջաբեկյանը զբաղեցնում է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրենի, 1999-2006 թթ.՝ ինստիտուտի տնօրենի, իսկ 2006 թթ. և այնուհետև՝ ինստիտուտի տնօրենի խորհրդականի պաշտոնները:

Վ. Խոջաբեկյանն աշխատելով ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում, իր ակադեմիական գիտելիքների հզոր պաշարի շնորհիվ, կարողացել է համատեղության կարգով զբաղեցնել նաև Հայկական հանրագիտարանի բոլոր հատորների տնտեսագիտության գիտաճյուղային խորհրդի անդամի, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների հիմնահարցերի խորհրդի անդամի, «Գիտելիք» ընկերության նախագահի տեղակալի, ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությանը կից մասնագիտական խորհրդի անդամի, ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալի, հումանիտար բաժանմունքի փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավագիտության պրոբլեմային խորհրդի նախագահի, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի նախագահի, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ատենախոսությունների պաշտպա- նության մասնագիտական խորհրդի նախագահի, տարբեր ամսագրերի, այդ թվում՝ միջազգային, խմբագրական խորհուրդների անդամի պաշտոնները:

Լինելով գիտության բնագավառի նվիրյալ՝ նա միաժամանակ աչքի էր ընկնում իր մանկավարժական զարմանալի եռանդով: Գիտնականը դասախոսել է հանրապետության առաջավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ իր գիտելիքներն ու փորձն ամբողջովին հաղորդելով իր սաներին: Տարիներ շարունակ նրա գիտական ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել: Այս առումով անգնահատելի է Վ. Խոջաբեկյանի վաստակը բարձրորակ տնտեսագետ-գիտնականների պատրաստման գործում, որով իր ինքնահաստատումն է գտել նրա ստեղծած գիտական դպրոցը: Դեռ ավելին, այդ իմաստով, բավական է միայն հիշա- տակել ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի հետևյալ խոսքը. «...չեմ հասկանում, թե ինչո՞ւ.... ինստիտուտում պետք է դասախոսի ընկեր Խոջաբեկյանը: Չէ՞ որ նա շատ խոշոր մասնագետ է դեմոգրաֆիայի և վիճակագրության հարցերում: ... Ինստիտուտում կարող էր տնտեսագիտական հարցերի շուրջ դասախոսել մի մարդ, որի ժամանակը թույլ կտար այդ անել: Խոջաբեկյանն ափսոս է...»:

Վ. Խոջաբեկյանը հայրենի այն գիտնականներից է, որի աշխատանքներն ինչպես խորհրդային, այնպես էլ անկախության տարիներին արժանացել են հանրային

ուշադրությանը՝ ըստ ամենայնի գնահատվելով որոշակի դիրքորոշումների՝ գործնական լայն նշանակություն ունեցող առաջարկությունների համար: Նրա ուսումնասիրությունների արդյունքները բազմիցս ներկայացվել են ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովներում և քննարկվել ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերում: Բավական է հիշատակել միայն վերջին տարիներին (2008-2010 թթ.) տնտեսության տարբեր ճյուղերի բարելավմանն ուղղված ակադեմիկոսի գիտական և գործնական առաջարկությունների վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ստացված շնորհակալական նամակ-պատասխանները, որտեղ խոսվում է կատարված աշխատանքի գիտական արժեքի, կարևորության և հրատապության մասին: Ճիշտ այդպես, իր ժամանակին, նրա գիտական աշխատությունների գործնական նշանակության համար իրենց շնորհակալական խոսքերն են հղել նաև Հայաստանի կուսկենտկոմը, Նախարարների խորհուրդը, Պետպլանը, Երևանի քաղկոմը և էլի ուրիշ կառույցներ:

Ակադեմիկոսը գիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների համար 1979 թ. արժանիորեն ներկայացվել է Հայաստանի Հանրագիտարանի 5-րդ և 1995 թ. Հայաստանի համառոտ հանրագիտարանի 2-րդ հատորներում, 2000 թ.՝ Ամերիկյան կենսագրական ինստիտուտի բառարանում: 1999 թ. արժանացել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից «1998 թվականի Տարվա մարդ» կոչմանը: 2003 թ. գիտության բնագավառում ստեղծագործական ակնառու նվաճումների համար պարգևատրվել է «Մովսես Խորենացի» շքանշանով: 2009 թ., ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, Հայաստանի պետական տնտեսագիտական հա-մալսարանը, ակադեմիկոսին պատվել է Համալսարանի ոսկե մեդալով:

Վ.Խոջաբեկյանն իր կեսդարյա ստեղծագործական կյանքի ընթացքում հեղինակել է շուրջ 500 գիտական աշխատություններ, այդ թվում՝ երկու տասնյակ մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ, գիտական զեկույցներ, ելույթներ և այլն: 1960-ական թվականներից Հայաստանի բնակչության և նրա աշխատանքային ռեսուրսների վերարտադրության հիմնախնդիրները դառնում են հայ տնտեսագիտության առանցքային հարցերից մեկը: Տասնամյակների ընթացքում Վ. Խոջաբեկյանի ուսումնասիրությունների, հետազոտությունների շրջանակն անընդհատ ընդլայնվում և խորանում է՝ ընդհանրացնելով սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջական պատկերը: Վ. Խոջաբեկյանի աշխատանքների հիմնական առանձնահատկություններից է այն, որ դրանք աչքի են ընկնում հեռանկարային կանխատեսումներ կատարելու յուրահատուկ մոտեցումներով ու սկզբունքներով: Պատահական չէ, որ նա ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա կանխատեսել էր Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը հեռանկարային տարբեր փուլերի համար (դրանք մասնավորապես ընդգրկում են 1966-1985, 1970-2000, 1979-2016 թթ., ինչպես նաև 2000 թ. մինչև 2050-2060-ական թվականների ժամանակահատվածները): Հիմնախնդիրների շուրջ գիտնականի մտքի արգասիքները արծածվել են «Հայկական ՍՍՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985 թթ. Հայկական ԽՍՀ-ում» եռահատոր աշխատությունում, «Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները», «Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978 թթ.)» մենագրություններում և այլ աշխատություններում:

Գիտնականը միշտ բարձրաձայնում և խոսում էր տվյալ պահին հասարակությանն անհանգստացնող, նրան սպառնացող գրեթե բոլոր երևույթների մասին անխտիր, այսինքն՝ ստեղծագործելը նրա համար ինքնանպատակ չէր: Դա, առաջին հերթին, գալիս էր իր խառնվածքից, իր՝ հայրենանվեր գործունեություն ծավալողի առաքելությունից: Իրոք, նրա կյանքի կարգախոսն էր՝ «Ամեն կերպ օգտակար լինել հայրենիքին»: Եվ ահա, 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի, Ղարաբաղյան պատերազմի, երկրում ձևավորված ծայր աստիճանի սոցիալ-տնտեսական բարդ ժամանակներում, Վ. Խոջաբեկյանը հրատարակում է «Աղետ և մտահոգություն», «Արցախը փորձության ժամին» մենագրությունները, որտեղ հանդես է գալիս աղետյալ շրջաններում ստեղծված արտակարգ իրավիճակի ժողովրդագրական հետևանքները հաղթահարելու քաղաքականության և սոցիալական բազմաբնույթ խնդիրներ լուծելու հիմնարար առաջարկություններով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են ներդրվում Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և ընդհանրապես՝ հայաթափության վերաբերյալ արխիվային բազմաշերտ նյութեր:

Վերջին տարիներին Վ. Խոջաբեկյանի աշխատությունները հիմնականում նվիրվել են նաև շուկայական տնտեսության միջավայրում Հայաստանում աշխատանքի շուկան կարգավորող տնտեսական մեխանիզմների մշակմանը, գործազրկության հաղթահարմանը, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: Նրա «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում» աշխատության մեջ հիմնավորվում է աշխատանքային ռեսուրսների ակտիվացման անհրաժեշտությունը: Առաջին անգամ ամբողջական տեսքով վերլուծվում և ընդհանրացվում է Հայաստանում աշխատանքի շուկայի ձևավորման իրավիճակը, առաջադրվում անցման շրջանում շուկայի պետական կարգավորման անհրաժեշտության գաղափարը:

Արդեն 1990-ական թվականների վերջերին, գիտնականի ստեղծագործական արդյունքներն այնքան ծավալուն էին, այնքան ընդգրկուն և հիմնավոր, որ առաջին հայացքից տպավորություն էր ստեղծվում, թե ժողովրդագրության հիմնախնդիրները սպառիչ կերպով քննարկված և բացահայտված են: Սակայն 2001 թ. Վ. Խոջաբեկյանը, գտնվելով նույնիսկ առողջական ծանր վիճակում, բոլորին անսպասելիորեն հասարակության դատին է հանձնում «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» մեծածավալ մենագրությունը՝ նոր շունչ հաղորդելով Հայաստանի ժամանակակից տնտեսագիտությանը: Մենագրությունը բացառիկ նշանակություն ունի ոչ միայն տնտեսագիտական, այլ նաև հայագիտության տեսանկյունից, այն ընդգրկում է շուրջ 300 տարվա ժողովրդագրության պատմությունը: Մենագրությունը նվիրված է XIX-XX դարերում Հայաստանի բնակչության աճի և տեղաշարժերի օրինաչափությունների պատմությանը, XXI դարի նախափուլի՝ զարգացման միտումների բացահայտմանը: Մեծ տեղ է հատկացված Անդրկովկասում, հատկապես նրա քաղաքներում, հայերի տարաբնակեցման, տեղաշարժերի և զբաղմունքի հիմնախնդիրներին: Առանձնահատուկ ուշադրություն է նվիրված ՀՀ բնակչության վերարտադրության ու գաղթի (միգրացիայի)՝ անցյալում դրսևորված և արդի փուլի առանձնահատկությունների բացահայտմանը, անդրադարձ է արվում արտագաղթի դրդապատճառներին, կանխատեսվում են հնարավոր ուղղությունները երրորդ հազարամյակի շեմին: Գիտական կարևոր նշանակություն ունեցող այս մենագրությունն էլ ավելի է արժևորվում, քանի որ ակադեմիկոսը բավական մանրակրկիտ ներկայացնում է ժողովրդագրության պատկերը երրորդ հազարամյակի՝ մեր օրերի շեմին: Կանխատեսվում են հանրապետության

բնակչության, երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական ուղղությունները, կարևորվում է առաջիկա տարիներին հիմնարար ժողովրդագրական քաղաքականության կենսական անհրաժեշտությունը: Մեծ հետաքրքրություն են առաջացնում 2000-2060 թթ. բնակչության տեղաշարժերի կանխատեսման հիմնահարցերը: Մենագրությունը հարուստ է արտագաղթը մեղմելու բազմաթիվ ու բազմաբովանդակ, արդիական հիմնադրույթներով, ինչպես և դրանց իրականացման խելամիտ լուծումներով: Այն, ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ լինելով եզակի արժեք, դեռ երկար տարիներ կհրավիրի հասարակության ուշադրությունը:

Վլադիմիր Խոջաբեկյանի՝ որպես հայ ազգի արժանի զավակի մասին մեր բոլոր պատկերացումների ընդհանրացում, և առավել քան երբևէ, իբրև նրան տրված ամբողջական բնութագիր, մեջբերում ենք Ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի՝ ակադեմիկոսի ծննդյան 75-ամյակին ուղղված շնորհավորական հետևյալ խոսքը. «...Մեր ժողովրդի ազնվականության գեներն իր արյամբ կրող, նրա ցավերին տեր կանգնող, դարմանումի միջոցներ որոնող Ձեր էությունը, որ չխնայելով իր առողջությունը, տարեց ակադեմիականին վերապահվող հանգիստ ու անփոթորիկ ապրելաձևը, փոխարենը նվիրվեց իր գործին՝ աննահանջ դիմագրավելով ընդիմախոսների հարձակումներին ու հակաճառությանը՝ մնալով անսասան ու անկաշառելի, իր օրինակով ինքնամաքրման, ինքնավերակերտումի հույս ներշնչեց հուսահատներին...»:

Հավատում եմ, որ Վլադիմիր Խոջաբեկյան «մարդ-արժեքը» այլևս հայ գիտական մտքի պատմության մատյաններում ոսկե տառերով է գրվելու... Գրվելու է, որովհետև նա իսկական Հայ մտավորական է և իսկական Հայ գիտնական: Իր ողջ կյանքում Վ. Խոջաբեկյանն առաջնորդվեց մարդկային այնպիսի վեհ արժեքներով, ինչպիսիք են հայրենասիրությունը, ազգասիրությունը, ծնողասիրությունը:

Նա ապրեց հայրենիքում, ստեղծագործեց հայրենիքի համար, ազգի համար: Հայրենիքի հանդեպ տածած նրա անսահման սերը գալիս է իր արմատներից, ծնողներից: Գիտնականի ծնողական սիրո ողջ պատկերացումն ամբողջապես արտահայտվում է ներքոնշյալ տողում, որից և հորդում է նրա մարդկային անզուգական, լուսավոր կերպարը՝ «...Զարմանալի է, շատ զարմանալի, ծնողական սիրո զորությունը...»: Եվ պատահական չէ, որ նա իր ամենաուշագրավ և դարակազմիկ՝ «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» մենագրությունը նվիրել է իր ծնողներին՝ որպես նրանց հանդեպ ունեցած որդիական սիրո ու պարտքի առհավատչյա:

Վլադիմիր Խոջաբեկյան՝ ազգի արժանավոր զավակի, ճշմարիտ հայ մտավորականի և գիտնականի քաղաքացիական առաքինությունը մարմնավորողը ընդմիշտ մեզ հետ է: Մեզ հետ է նաև նրա թողած գիտական հարուստ ժառանգությունը, որն արդեն իսկ իր ուրույն տեղն է զբաղեցրել տնտեսագիտական մտքի շտեմարանում, որից դեռ շատ ու շատ սերունդներ են օգտվելու և դասեր քաղելու:

ՓԱՓԱԶՅԱՆ Խ. Ս.
Տնտեսագիտության թեկնածու